Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ N 2

Ի պատասխան № **SILD-AFG-03 Աշտարակ և Մեծամոր համայնքների համար աղբատար մեքենաների գնում (բաղկացած 3 լոտից)** մրցույթի վերաբերյալ 15.02.2023թ. Armeps համակարգով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարց՝

Հարգելի գնահատող հանձնաժողով.

Մրցույթի Հրավերով նախատեսվել է, որ հիմնական փոխարինող բաղադրիչների պարտադիր պահեստամասերի և սպասարկման արժեքը պետք է լինի 5 տարի:

Խնդրում ենք պարզաբանել, թե ինչպես կարող է պահեստամասերի և սպասարկման գինը լինել կայուն 5 տարվա համար և ինչ այլընտրանք կարող է ներկայացնել Պատվիրատուն, որ սույն կետի պահանջը լինի իրատեսական:

Պատասխան՝

Հարգելի հայտատու,
Համաձայն մրցութային հրավերի I Բաժին «Ցուցումներ Հայտատուներին» 16-րդ կետի «Փաստաթղթեր, որոնցով հաստատվում են ապրանքների և հարակից ծառայությունների իրավասությունը և համապատասխանությունը» 4-րդ ենթակետի

*«16.4 Հայտատուն պետք է տրամադրի նաև ամբողջական մանրամասներ, ներառյալ պահեստամասերի, հատուկ գործիքների և այլնի առկա աղբյուրները և **ընթացիկ գները**, որոնք անհրաժեշտ են գնորդի կողմից Ապրանքների պատշաճ և շարունակական գործունեության համար՝ օգտագործման սկսվելուց հետո ՄՏԱ-ում նշված ժամանակահատվածում:»*

Ելնելով վերոգրյալից՝ հայտատուն մրցութային հայտով պետք է ներկայացնի պահեստամաեսերի **ընթացիկ** գները:

Հարգանքով,
Ռոզա Դանիելյան
№ SILD-AFG-03 մրցույթի քարտուղար
ՀՏԶՀ

16.02.2023թ.